

## ԱԿԱՂԵՍԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ԶԱՅՈՒԿՅԱՆ



Հայագիտությունը մեծ կորուստ կրեց: Վախճանվեց գիտության մեծ երախտավոր, համաշխարհային ճանաչում ունեցող լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն **Գևորգ Բեգլարի Ջահուկյանը**:

Գ. Ջահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կալինինոյի շրջանի Շահնագար (այժմ՝ Տաշիրի մարզի Մեծավան) գյուղում: 1937-ին ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1941-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1942-43 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1945-ից մինչև իր կյանքի վերջը Երևանի պետական համալսարանում դասավանդել է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լատիներեն, լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն, հին հունարեն և այլն:

1947-ին պաշտպանել է քեկնածուական, իսկ 1955-ին՝ դոկտորական ատենախոսություններ: 1958-ին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում, 1968-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ քրթակից անդամ, իսկ 1974-ին՝ ակադեմիկոս:

Ականավոր հայագետի գիտական գործունեության մեջ կարևոր փուլ է սկսվել 1962-ից, երբ նա նշանակվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն: Գերազանցապես Գ. Ջահուկյանի՝ ավելի քան 40-ամյա գիտակազմակերպական գործունեությամբ են պայմանավորված այդ ինստիտուտի և ընդհանրապես հայ լեզվաբանության շատ ու շատ նվաճումներ:

Գ. Ջահուկյանը այն բացառիկ անհատականություններից էր, որի գիտական հետազոտությունների շրջանակը արտակարգ լայն էր և ընդգրկում: Չկա հայերենագիտության մի բնագավառ, որտեղ նա ասած չլինի իր ծանրակշիռ և ուղենշային խոսքը:

Նա հայերենի համեմատական քերականության և հայոց լեզվի պատմության ամենաճանաչված մասնագետն էր: «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» (1959), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (1967, ռուսերեն), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (1982, ռուսերեն), «Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան» (1987, արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի) և այլ մենագրություններում ու քաղում հողվածներում Գ. Ջահուկյանն իրեն հատուկ գիտական խորաթափանցությամբ հանգամանորեն քննել և լուծել է հայոց լեզվի պատմությանը, շրջանաբաժան-

մանը և ընդհանրապես հնդեվրոպաբանությանն առնչվող բազմաթիվ կարևոր հիմնահարցեր:

Հայ բարբառագիտության բնագավառում շրջադարձային եղավ Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) աշխատությունը, որը, համրագումարելով այդ ասպարեզի մախորդ նվաճումները, սկզբունքորեն նոր ուղի է բացում հայ բարբառների դասակարգման և բարբառագիտական հետազոտությունների հետագա ծավալման համար:

Գ. Ջահուկյանի գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ է զբաղեցրել արդի հայերենի ուսումնասիրությունը: «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (1989) և այլ մենագրություններում Գ. Ջահուկյանը առաջ է քաշել լեզվաբանական նկարագրության նոր՝ լեզվի բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված քննության սկզբունքը, որի մշակումն ու կիրառությունը լեզվաբանական գիտության մեջ կապվում է նրա անվան հետ: Այս կարգի հետազոտությունները մեծապես պայմանավորել են Գ. Ջահուկյանի ձեռք բերած վիթխարի նվաճումները նաև տեսական լեզվաբանության բնագավառում: «Լեզվաբանության պատմություն» (հ. 1, 1961, հ. 2, 1962), «Ընդհանուր և հայկական լեզվաբանություն» (1978) և այլ աշխատություններում քննարկված տեսական գաղափարները հանգեցրել են Գ. Ջահուկյանի կողմից

մշակված համընդհանուր լեզվաբանական կադապարի ամբողջական նկարագրությանը, որը հեղինակը համարում էր իր կյանքի գործը, և բարեբախտաբար հասցրեց ավարտել և համաշխարհային գիտական հանրությանը ներկայացնել «Համընդհանուր լեզվաբանական տեսություն» ծանրակշիռ աշխատությամբ՝ ռուսերեն և անգլերեն: Ցավոք, մեծ գիտնականը չհասցրեց ամբողջացնել իր ևս մի հիմնարար աշխատություն՝ հայերենի նոր ստուգաբանական բառարանը:

Գ. Ջահուկյանը, երկար տարիներ լինելով «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, նրա էջերում տպագրած իր տասնյակ հոդվածներով, այլոց հոդվածների գրախոսմամբ ու տված խորհուրդներով մեծապես նպաստել է հանդեսի գիտական մակարդակի բարձրացմանը:

Գ. Ջահուկյանի գիտական, կազմակերպչական և մանկավարժական բեղմնավոր գործունեությունը զնահատվել է ըստ արժանվույն: Նա գիտության վաստակավոր գործիչ էր, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով:

Գ. Ջահուկյանի պատկառելի գիտական ժառանգությունը ապահովել է նրա մշտական ներկայությունը գիտության մեծերի շարքում: Մեծ գիտնականի լուսավոր և առինքնող մարդկային կերպարը անցնջելի կմնա նրան ճանաչողների, հազարավոր սաների և ապագա սերունդների սրտերում:

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**